

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

ԱՐՎԵՍ
ART
ИСКУССТВО

ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ*,
ՍԱՐԱ ԼԱՓՈՐՏ-ԷՖԹԵԽԱՐՅԱՆ**

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՆԿԱՐԱՉԱՐԱՆԻ ՄԻ ԷՉ,
ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽՈՐՀՐԳԱՆԻՇ

Բանալի բառեր՝ Պիեռ-Պոլոս Լազարյան, Անրի Ֆելիքս էմանուել Ֆիլիպոտո, Սարա Լափորթ-Էֆթեխարյան, Պիեռ Էդուարդ Ֆրեր, Ֆարրոխ Խան:

2018 թվականին Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրվեց նկարազարդ մի էջ, որն իր թեմատիկայով և ոճական հատկանիշներով առնչվում է Հակոբ Հովնաթանյանի ժամանակներին (նկ. 1)**: Դա պատմականորեն համապատասխանում է Իրանում Ղաջարական արքայատոհմի կառավարման ժամանակաշրջանին, սակայն նկարը ստեղծվել է բոլորովին այլ միջավայրում: Տպագիր այս նկարը երկար տարիներ պատկանել է Պիեռ-Պոլոս Լազարյանի ընտանիքին (նկ. 2): Դրա մասին է վկայում ընտանեկան զմուռսե կնքագրոջը, որի վրա տեսանելի է Պիեռի կամ Փիերի անվան առաջին Պ (P) տառը (նկ. 3): Պիեռ-Պոլոս Լազարյանի գուտար Սարա Լափորթ-Էֆթեխարյանը 2018 թվականին այս նկարը նվիրել է Մաշտոցի անվան Մատենադարանին:

Նկարի «անցած ուղին»

Նկարը Պիեռ-Պոլոս Լազարյանին փոխանցել է Սարա Լափորթ-Էֆթեխարյանի նախապապ Խաչիկ Լազարյանը: Խաչիկ Լազարյանը ծնվել է 1818 թվականին:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, արվեստագիտության թեկնածու, yvettetaj@yahoo.com, ** Լիլ Համալսարան (Ֆրանսիա), դոկտոր, sarah.laporte1@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը հունվարի 19, 2022, գրախոսելու օրը ապրիլի 25, 2022:

*** Այս և մյուս նկարները տեսնելու համար:

նին Նոր Զուղայում (Սպահան) և, ենթադրաբար, մահացել 1898 թվականին¹: Որպես վաճառականների մեծ և հայտնի ընտանիքի անդամ՝ հաշիկը շարունակում է իր նախնիների գործունեությունը, որոնք զբաղվում էին Հնդկաստանից և Պարսկաստանից բերված չմշակված թանկարժեք քարերի առք ու վաճառքով (նկ. 4): Ապրանքների փոխադրումներն իրականացվում էին և՛ ցամաքային, և՛ ծովային ճանապարհով: Խաշիկն ունեցել է առևտրական նավ, որով նույնիսկ պատերազմների ժամանակ կարողացել է ապահով առևտրով զբաղվել: Այն պատկանել է այն բացառիկ արտոնությունք եռակայմ առևտրական նավերի տեսակին, որոնք պատերազմի ժամանակ կարող էին ազատ նավարկել՝ զերծ մնալով ծովային մարտերից:

Խաշիկ Լազարյանի կյանքում կարևոր դերակատարություն է ունեցել Պարսկաստանի Քաշան քաղաքում ծնված Ֆարրոխ Խանը (1812-1871 թթ.), որն անմիջական կապ ունի Մատենադարանին նվիրաբերած նկարի հետ (նկ. 5): Նա Խաշիկի մտերիմ ընկերն էր ու կարևոր դեր էր խաղում նրա ընտանիքի կյանքում: Խաշիկը բախվել է բազմաթիվ խնդիրների եվրոպայում, Ասիայում և ընդհանրապես այն քաղաքներում, որտեղ պատերազմների ժամանակ զբաղվել է առևտրով: Իր գործունեության սկզբում նա բնակություն է հաստատել Բոմբեյում և առևտրական կապեր ստեղծել Ռուսաստանի և եվրոպայի շատ երկրների հետ՝ միաժամանակ հավատարիմ մնալով իր պապերի հայրենիք Հայաստանին, որտեղ եղել է մի քանի անգամ:

Նրա գործունեության վերջին կայուն վայրերից մեկը Օդեսան էր, որտեղ նա ամուսնացավ ուսուցիչի հետ: Օդեսան գեղեցիկ քաղաք էր, որտեղ ապրում էին բազմաթիվ օտարերկրացիներ՝ հատկապես առևտրականներ՝ ամենատարբեր խավերից: Շվեյցարացի վաճառական, փորագրիչ և նկարիչ Դանիել Վեգելինը հետաքրքիր կերպով է նկարագրել այս քաղաքի կյանքը. «Օդեսայում խոսում էին առնվազն քսան լեզուներով, ինչպես նաև դավանում տասը կրոն: [...] Այնտեղ ուսը մրցակցում էր թուրքի հետ, գերմանացին՝ հույնի, անգլիացին՝ հայի, ֆրանսիացին՝ արաբի, իտալացին՝ պարսիկի կամ բուխարացու հետ»²:

Դրիմի պատերազմը ծանր հետևանք ունեցավ Խաշիկի համար, և նա որոշեց լքել այս քաղաքը ու նորից բնակություն հաստատել Նոր Զուղայում: Հետագայում տեղափոխվեց կնոջ ծննդավայր՝ Սանկտ Պետերբուրգ, որտեղ 1868 թվա-

¹ Հայտնի չէ, թե երբ և որտեղ է մահացել Խաշիկ Լազարյանը:

² “In Odessa at least twenty languages were spoken as well as ten religions practiced. [...] There, the Russian jostles against a Turk, a German against a Greek, an Englishman against an Armenian, a Frenchman against an Arab, an Italian against a Persian or a Bukharian”. **Patricia Herlihy**, *Odessa: A History, 1794-1914*, distributed by Harvard University Press for the Harvard Ukrainian Research Institute, 1991, p. 124.

կանին ծնվեց նրանց որդի Հովսեփը՝ Պիեռ-Պոլոսի մեծ պապը: Խաչիկը շարունակեց առևտրով զբաղվել ռուսների և ֆրանսիացիների հետ՝ պահպանելով իր կապերը Պարսկաստանի և մասնավորապես իր ընկեր Ֆարրոխ Խանի հետ, որը 1866 թվականին դարձավ Սպահանի կառավարիչը: Նա վայելում էր Խաչիկի աջակցությունը՝ նպաստելով օտարերկրացիների հետ հաղորդակցության շրջանակի ընդլայնմանը: Խաչիկի որդի Հովսեփի (1868-1918 թթ.) անունը ֆրանսիական տարբերակով դարձել է Ժոզեֆ: Նրա որդի Պոլոսը ծնվել է 1893 թ. Լորենում և մահացել 1930 թ.՝ միայնակ թողնելով կնոջը՝ Աննային³ (ցեղասպանությունը վերապրած Անահիտին) և որդուն՝ Պիեռ-Պոլոս Լազարյանին⁴ (նկ. 6,7):

Օդեսայում Խաչիկ Լազարյանը հանդիպում է անվանի ծովանկարիչ Հովհաննես Ալվազովսկուն: Որոշ ժամանակ անց Ալվազովսկին մատիտով նկարում է ծովի ալիքներով պարուրված Խաչիկի նավը: Աշխատանքը, սակայն, մնաց, որպես գծանկար: Օդեսայի տունը լքելուց հետո Խաչիկն անհայտ հանգամանքներում կորցնում է նաև բազմաթիվ իրերով ու թանկարժեք քարերով բեռնված սեփական առևտրային նավը: Այս գծանկարը նույնպես, ժառանգաբար փոխանցվել է Լափորթ-էֆթեսարյանին և այժմ հավաքածուի մաս է կազմում:

Խաչիկը, որ արդեն բարեկամական կապեր էր հաստատել Ֆարրոխ Խանի հետ, 1856-1857 թթ. ընկերոջը ծանոթացնում է ֆրանսիական և անգլիական մասոնական շրջանակների հետ (նկ. 8): Ֆարրոխ Խանը իր հերթին պայմաններ է ստեղծում, որպեսզի պարսկական ազնվականության որոշ ներկայացուցիչներ (այդ թվում Նասեր-էդ Դին Շահի որդի Մասուդ Միրզա Զել-է Սուլթանը⁵) մասոնների հետ գործնական հարաբերություններ հաստատեն: Այս ծանոթություններ

³ Այրու համար շատ դժվար էր առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանը: Նա գոյատևելու համար ստիպված եղավ վաճառել իր ժառանգության մեծ մասը, այնուհետև վերադարձավ Պարսկաստան, երբեք չամուսնացավ, աշխատեց որպես տարբեր երկրների դեսպանատների բարգմանիչ: Ինչպես շատ ֆրանսախոս հայեր, որոնց պարսիկները կոչում էին «Մադամ», նա նույնպես հայտնի էր որպես «տիկին Լիլի»: Նա փորձում էր որդուն փոխանցել իր ընտանիքի մշակութային ժառանգությունը և սերը դեպի Հայաստան, Պարսկաստան և Ֆրանսիա:

⁴ Հոգվածի սկզբում հիշատակել ենք Պիեռ-Պոլոս Լազարյանին: Պիեռի կամ Փիեռի անվան առաջին Պ (P) տառը զմուռես կնիադրոշմով զարդարում է մեր նկարի երկու կողմերը:

⁵ Ֆարրոխ Խանը Նասեր էդ-Դին շահի որդի Մասուդ Միրզա Զել-է Սուլթանի դաստիարակն էր: Վերջինս հոր պես առաջադեմ էր և ընդդիմանում էր պարսկական հասարակության ազգային այն սովորույթներին, որոնք իրանցիները ժառանգել էին նախնիներից: Նա բացեց առաջին հումանիտար անվճար դպրոցը Սպահանում ապրող օտարազգի երեխաների համար: Այդ դպրոցում սովորում էին հայ, հրեա, ասորի, մահմեդական և այլ էթնիկ ծագում ունեցող երեխաներ: Մասուդ Միրզայի կյանքի որոշ դրվագներ հետագայում Ֆարրոխ Խանի ցանկությամբ «Օտարերկրացիները Փարիզում» գրքի մաս դարձավ, որովհետև Մասուդ Միրզան շատ ժամանակ էր անցկացրել Ֆրանսիայում՝ հատկապես Փարիզում, շփվելով ֆրանսիական մտավորականության հետ:

րը և հանդիպումները կարևոր էին, քանի որ, կապերը տեղի կիրթ ֆրանսիացիների կամ անգլիացիների ու եկվորների հետ նպաստում էին նոր գաղափարների և ծրագրերի ի հայտ գալուն, Փարիզում հաստատված՝ Միջերկրծովյան ժողովուրդների ներկայացուցիչներին նվիրված նոր գրքերի հրատարակմանը: Այդօրինակ գրքերը 1848 թվականից նորաձև դարձան: Մեր ուսումնասիրության առանցքում հայտնված նկարազարդ էջը մաս է կազմում այդպիսի մի գրքի, որի հրատարակումը նախաձեռնեց հաշիկ Լազարյանը: Թուրք և պարսիկ ժողովուրդները բավականաչափ հայտնի էին եվրոպացիներին, սակայն այս երկու կայսրություններում բնակվող մյուս էթնիկ խմբերին հազվադեպ էին ուշադրության դարձնում: Խաշիկը «Օտարերկրացիները Փարիզում» (Les Étrangers à Paris)⁶ գրքի «Ասիայի և Կովկասի ժողովրդի գեղատեսիլ պատմությունը» բաժնի համար առաջարկեց ներկայացնել Պարսկաստանի՝ Ֆարրոխ Խանի ենթակայության տակ գտնվող գավառների բնակիչներին⁷:



Նկ. 8. Ֆրանսիայում Իրանի դեսպան՝ Ֆարրոխ Խանի ընդունելությունը՝ հունվար 31, 1857 թվականի պաշտոնական մուտքը Փարիզի Տյուլիբի արքայական պալատ (այժմ ավերված): Նկարը՝ «L'Illustration, Journal universel, 1857, France» գրքից

⁶ C. Warée, *Les étrangers à Paris*, Paris, 1844.

⁷ Վերադառնալով Իրան Ֆարրոխ Խանը, դարձավ ներքին գործերի նախարար: Նա Ղաչար թագավոր Նասեր-էդ Դին շահին համոզեց, որ ուսումը շարունակելու նպատակով 24 շնորհալի ուսանողի ուղարկի Եվրոպա: Հետագայում Ֆարրոխ Խանը դարձավ Սպահանի և շատ այլ հաղափների նահանգապետ: 1871 թ. նրա մահից երկու տարի անց Սպահանի նահանգապետ դարձավ նրա պաշտպանյալ Մասուդ Միրզա Զեյ-է Սուլթանին: Խաշիկն իր ընկեր Ֆարրոխ խանի մահից հետո շարունակեց ամուր կապ պահել Մասուդ Միրզայի հետ:

Նկարի արվեստաբանական վերլուծությունը

Խնդրո առարկա նկարի հեղինակը Նապոլեոն III-ի պաշտոնական նկարիչ Ֆրանսիացի Անրի Ֆելիքս էմանուել Ֆիլիպոտոն (1815-1884) է (Henri Félix Emmanuel Philippoteaux): Նա ստեղծել է մեծ թվով աշխատանքներ՝ նվիրված Ֆրանսիական բանակի հաղթանակներին՝ մասնավորապես Նապոլեոն Բոնապարտի հաջողություններին: Նկարիչը մանրակրկիտ կերպով պատկերել է զինվորական համազգեստների տեսակները, որոնց շնորհիվ կարող ենք տարբերակել շարքային զինվորին սպայից: Նկարչի ստեղծագործությունները լրացուցիչ պատկերավոր աղբյուր են 19-րդ դարի Ֆրանսիայի պատմությանը և ազգագրությանը հետաքրքրվողների համար⁸:

Փորագրիչը Ֆրանսիացի Պիեռ Էդուարդ Ֆրերն (1819-1886) է (Pierre Édouard Frère), որ հայտնի է իր կենցաղային ժանրի ստեղծագործություններով: Ֆիլիպոտոյի հետ միասին նրանք հաճախել են Փարիզի կերպարվեստի դպրոց և դասվում են 19-րդ դարի Ֆրանսիացի հայտնի նկարիչների շարքին: Նրանց են պատկանում բազմաթիվ նկարներ, գծանկարներ և փորագրանկարներ, որոնք ստեղծվել են Ֆրանսիայի պատմական վայրերից և տեսարաններից ներշնչված:

Խնդրո առարկա նկարագարող էջի հիմքում փորագրանկարն է, որը ներկվել է ջրաներկով⁹:

⁸ "Death of a French Painter" (PDF), *The New York Times*, November 10, 1884, 103625727.pdf (nytimes.com).

⁹ «Լիթոգրաֆիա» բառը ծագել է հին հունարեն երկու բառից՝ «լիթոս» (fար), և «գրաֆեյն» (գրել), Λίθος (lithos) «ֆար» և γράφειν (graphein) «գրել»: Առաջին հայացքից նկարչություն հիշեցնող տպագրման այս եղանակի համար կարևոր դերակատարություն ունեն յուղը և ջուրը: Լիթոգրաֆիայի համար օգտագործվում է հատուկ ֆար: Կարևոր է, որ օգտագործվող ֆարը ճիշտ ընտրված լինի, քանի որ աշխատանքի ընթացքում հաստոցը հսկայական ճնշում է ապահովում, և սխալ ընտրության հետևանքով ֆարը կարող է ճնշմանը չդիմանալ ու մասերի բաժանվել: Նկարիչը լիթո մատիտով կամ մասնագիտացված յուղոտ մատիտով նկարում է չոր ֆարի վրա: Երբ նա գոհ է լինում արդյունքից և ֆարի գծագրությունից, ապա մակերեսը մշակվում և պատրաստվում է հաջորդ փուլի համար: Քարի մակերեսը քրջվում է ազոտաթթվով: Այն մասերը, որոնք նկարված են յուղոտ մատիտով, թթուն չեն ընդունում: Թրվեցնելուց հետո մատիտի հետքերը հեռացվում են, և ֆարը ծածկվում է տպագրական յուղոտ ներկանյութով: Ներկը նստում է միայն մատիտի հետքերի հատվածներում, իսկ թրվով քրջված մասերը յուղը չեն ընդունում (What is a Lithograph?)

Understanding Different Types of Printing (invaluable.com)

<https://www.pinterest.com/pin/297941331599117511/>: Թուղթը ամրագրում է այն ամենը,

ինչ նկարված է յուղոտ մատիտով: Այս տեխնիկան հնարավորություն է տալիս մի

գեղանկարից բազմաթիվ կրկնօրինակներ անել:

Այսօրինակ տպագրության համար ֆարի փոխարեն օգտագործվել են նաև ցինկի տախտակներ (այս տեխնիկան կոչվում է ցինկոգրաֆիա), սակայն այս դեպքում նկարիչները լիթո-

Նշենք, որ այն հատուկ նկարվել է «Օտարերկրացիները Փարիզում» գրքի «Ասիայի և Կովկասի ժողովրդի գեղատեսիլ պատմությունը» բաժնի համար: Նկարի տակ գրված է «Ասիա»՝ այսպիսով պարզ է դառնում, որ հեղինակը անդրադարձել է տարբեր ժողովուրդների, ազգությունների և կրոնի հետևորդների, որոնք ապրել են Փարիզում:

Այն, փորագրանկարի հիման վրա, ներկվել է ջրաներկով և թվագրված է 1860 թվականով: Նկարի աջ հատվածում կանգնած տղամարդը, իր ազգային զգեստի հատկանիշներից ելնելով չերկեզ (չերքեզ, չերքես) է¹⁰: Նա իր թուրը պահել է ձախ ձեռքին, աջ ձեռքը ազդրին՝ դաշույնի մոտ: Նրա կողքին, հատակին նստած պատկերված է Ղաջարական ժամանակներին բնորոշ գլխարկով մի տղամարդ¹¹: Նստած դիրքը, կեցվածքը վկայում են, որ դա հասարակ մարդ չէ, այլ հեղինակավոր պաշտոնյա, որը նայում է իր կողքին կանգնած երկու գեղեցիկ կանանց: Առաջին կինը նայում է դիտողին՝ մեղմ ժեստով պարանոցի թեթև՝ հավանաբար մետաքսյա շարժք բռնած, որն իջնում է քողից: Հանդերձանքը վկայում է, որ պատկերվածը բարձրաշխարհիկ կին է¹²: Նրա կողքին, քիչ հետ՝ մի աղջիկ նույնպես նայում է դեպի դիտողը և ամբողջովին ծածկված է սպիտակ

գրաֆիային բնորոշ հարուստ երանգավորում չէին կարողանում ստանալ: 18-րդ դարում այս տեխնիկան ավելի դյուրին դարձավ և մեծ զարգացում ապրեց, և նրա շնորհիվ գեղանկարի վերաստությունը լայն տարածում ստացավ: Օֆորտին բնորոշ սուր գծերը լիթոգրաֆիային հատուկ չեն, հակառակը՝ ավելի տեսանելի են լայն, նուրբ ու փափուկ անցումներով գծերը: Նմանատիպ գծերով վարպետ նկարիչը կարողանում է ստանալ տոնային և լուսատվերային լուծումներ, որոնց շնորհիվ առաջին, միջին և խորֆային պլանները հստակորեն առանձնանում են: Ուստի նկարիչները չէին կարող անմասն մնալ լայն հնարավորություններ տվող այս տեխնիկայից և փորձում էին նորովի արտահայտվել: Լիթոգրաֆիա ստեղծելու համար արվեստի բնօրինակ գործերը տպագրվում և վերատապագրվում են՝ առավել հաճախ օգտագործելով հարթ ֆաբեր կամ մետաղական քիթեղներ: Վերջինիս վրա արվում է գծանկար: Լիթոգրաֆիա տեխնիկայով արված փորագրանկարը ֆրանսերեն կոչվում է (gravure): Գործերի հիմնում ընկած է ձեռքով արված նկարչությունը, որը որպես կանոն ունենում է ստորագրություն: Օֆսեթը (անգլ.՝ offset - հյուղավորում)՝ հարթ տպագրության եղանակ է, որի դեպքում ներկը տպագրական տպանից քղթի վրա փոխադրվում է միջանկյալ էլաստիկ (ռետինե) շերտի միջոցով: Առաջին օֆսեթ տպագրական մեքենան հայտնագործվել է ԱՄՆ-ում 1905 թ.):

Վիամփորագրությունը համարվում է տպագիր գրաֆիկայի երիտասարդ տեսակներից: Գերմանիայում այն հայտնագործել է մասնագիտությամբ դերասան Ալրիս Զենեֆերդելը 1798 թ., իսկ լայն հանաչում է ստացել միայն 1820 թ.: Լիթոգրաֆիան կապված է տնտեսական գործունեության, գաղափարական և լրատվական տեղեկատվության տարածման գործունի հետ (Lithography | History of Science Museum (ox.ac.uk))

¹⁰ Զերեզ տղամարդու նկարի տակ գրված է «Circassien»:

¹¹ Ղաջարական ժամանակներին բնորոշ հանդերձանով տղամարդու նկարի տակ գրված է «Persan»՝ պարսիկ:

¹² Վրացահայ կանանց նկարի տակ գրված է «Femmes de Tiflis»՝ թիֆլիսեցի կանայք:

շղարշով. մարմնի միակ տեսանելի մասը գլխաշորի տակից երևացող գեղեցիկ դեմքն է: Նա բարձրաշխարհիկ տիկնոջը մտերիմ անձնավորություն է, հավանաբար՝ նրա սպասուհին: Հատակին հանդիսավոր կեցվածքով նստած տղամարդու թիկունքում՝ անկյունագծի երկայնքով, ավանդական քրդական հանդերձանքով մի ձիավոր է¹³: Սպիտակ ձիու վրա նստած քրդի դիրքը վկայում է հասարակությունում ունեցած բարձր դիրքի մասին: Հեծյալը ամուր բռնել է նիզակը, հայացքն ուղղել դեպի լեռներ (նկ. 9):

Մեր կարծիքով, հատակին հպարտ դիրքավորված տղամարդը՝ հայտնի Ֆարրոխ Խանն է, որը ղաջարների օրոք բարձր պաշտոններ է զբաղեցրել: Ղաջարական Իրանի դեսպանն էր Ֆրանսիայում և կարևոր դեր է խաղացել Իրանի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցած բանակցություններում: Նա Իրանից Ֆրանսիա էր գնացել բազմաթիվ նվերներով, որոնց թվում աչքի ընկան հատկապես շատ հայտնի քրդական ազնվատոհմ ձիերը:

Ակնհայտ է, որ եվրոպացի նկարիչ Անրի Ֆելիքս էմանուել Ֆիլիպոտոն իր ժամանակներում Փարիզում ապրող օտարերկրացիներին մոգեկավորելու համար մեծ խնդրի առջև է կանգնած եղել: Նկարիչը հնարավորինս փորձել է կերպարներին տալ ազգային պատկանելության իրական հատկանիշներ: Կասկած չունենք, որ թիֆլիսեցի կնոջ պարագայում, նկարչի համար ոգեշնչման աղբյուր է ծառայել Հակոբ Հովնաթանյանի մարմնավորած կնոջ իդեալական կերպարը: Այստեղ, հավանաբար, Հովնաթանյանի բնորոշների ազգությունը նկարչին չի հետաքրքրել, ու նրանց չի դիտել որպես հայ, այլ ուղղակի որպես Վրաստանի բնակիչ:

Մեր դիտարկումը հաստատվում է նրանով, որ 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում մեծ թվով հայեր Գյանջայի և Ղարաբաղի խանություններից գաղթեցին Կախեթ, Սոմխեթ և Քարթլի, որոնք արդեն Ռուսաստանի տիրապետության տակ էին: Ըստ Ալ. Երիցյանցի տվյալներին՝ Վրաստանի քրիստոնյա բնակչության 1/3-ը հայեր էին, իսկ «վրացիք՝ պակաս, քան 2/3-ը: Հայք վերոհիշյալ վեց քաղաքներում (Թիֆլիս, Գորի, Անանուր, Թելավ, Սղնախ, Ելիզավետպոլ) ամենաբազմաթիվ տարրն էր... ուլժ քաղաքացիներից 7-ը՝ հայ էր և մեկը՝ վրացի, իսկ չորս գյուղացիներից երեքը՝ վրացի, մեկը՝ հայ...»¹⁴, իսկ 1840 թվականից սկսած՝ երկար տարիներ հայ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները զբաղեցնում էին Թիֆլիսի քաղաքագլխի

¹³ Զիավորի նկարի տակ գրված է «Cavalier kurde»՝ ֆուդ դեժյալ:

¹⁴ Ալ. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում (1800-1832), մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 139:

պաշտոնը¹⁵: 1897 թ. «Իվերիա» վրացական թերթն իր մտահոգությունն էր հայտնում հօգուտ հայերի Թիֆլիսի բնակչության էթնիկ կազմի փոփոխության՝ հիշատակելով, որ քաղաքային ծառայողների 93%-ը հայեր են¹⁶:

Վստահաբար, նկարիչը Իրանի քաղաքացուն ներկայացնելու համար իր առջև խնդիր է դրել գտնել այնպիսի մի մոդել, որը որպես հավաքական կերպար կփոխանցի տվյալ ժողովրդին բնորոշ ազգային դիմագիծը: Այսպիսով, իրանցուն ներկայացնելու համար ընտրել է տվյալ ժամանակ իրենց միջավայրում հայտնի քաղաքական գործիչ Ֆարրոխ խանին:

Միևնույն ժամանակ կարող ենք եզրակացնել, որ 19-րդ դարի հայ և իրանցի նկարիչների մոտ եվրոպական նկարելատճը գուգակցվում էր նրանց էությունը բնորոշ արևելյան փառավորության, արտաքին շքեղության և դեկորատիվ գունազեղության հետ, իսկ եվրոպացի նկարիչը գերծ է մնացել արևելյան գունազեղությունից ու փայլից: Նկարչի մոտ գույները նուրբ են ու ներդաշնակ:

Ավարտին պետք է զարմանքով արձանագրենք, որ խորհրդանշական այս նկարը, որն ի սկզբանե նկարվել էր «Օտարերկրացիները Փարիզում» գրքի համար, մեզ անհայտ պատճառով, այդպես էլ չընդգրկվեց համապատասխան գրքում և մնաց որպես «լիթոգրաֆ» առանձին էջ: Լազարյանների այս ճյուղի վերջին ներկայացուցիչ Պիեռ-Պոլոս Լազարյանը մահացավ 2016 թվականին: Նա ցանկանում էր, որ իրեն պատկանող արվեստի ուղի գործեր հանգրվան գտնեն Հայաստանում, մասնավորապես Մատենադարանում: Այսպիսով, խնդրո առարկա նկարն իր ստեղծման պատմությամբ, անցած ուղիով, ոճական առանձնահատկություններով ու մանրամասներով, նաև թեմատիկայով, կատարման եղանակով և ի վերջո Մատենադարանում հանգրվանելու իրողությամբ, կարող ենք համարել մշակութային փոխազդեցությունների ինքնատիպ խորհրդանիշ:

¹⁵ Վարդանյան-Այվազյան Թ., «Թիֆլիսի և մերձակա բնակավայրերի հայությունը 5-21-րդ դդ.», *Գլոբուս*, թիվ 8-9 (53-54), Երևան, 2014, էջ 15:

¹⁶ Վարդանյան Թ., «Հայ-վրացական ազգամիջյան հարաբերությունների պատմությունից», *Դրոշակ*, Երևան, 2003, թիվ 1, էջ 102:

YVETTE TAJARIAN

SARAH LAPORT-EFTEKHARYAN

A NEWLY DISCOVERED ILLUSTRATED PAGE

AS A SYMBOL OF CULTURAL INFLUENCES

Keywords: Pierre-Poghos Lazaryan, Henri Félix Emmanuel Philippoteaux, Sarah Laport-Eftekharyan, Pierre-Edouard Frère, Farrokh Khan.

In 2018, Sarah Laport-Eftekharyan donated a printed illustrated page entitled "The Beautiful Story of the People of Asia and the Caucasus" to Matenadaran. It belonged to the family of the donor's father, Pierre-Poghos Lazaryan for many years. The authors tried to find out as much as possible and to present the story of the picture.

Since the work is based on an engraving, the authors write about the engraving technique, which helps to analyze the illustrated page that has not been studied so far.

The thematic and stylistic features of the painting are related to the time of Hovnatanyans and the Qajars, but it was painted in Europe. The article examines the period of creation of the painting, the environment, the painting technique, the composition, the subject matter, the nationality of the represented persons, the position of each figure, their clothes, etc.

The painter is Henri Félix Emmanuel Philippoteaux from France. The engraver is the Frenchman Pierre-Edouard Frère. Later it was water-colored and published in France in 1860. It was intended to be part of the book *Foreigners in Paris* but for an unknown reason was not included in it.

After a scrupulous study, this page kept in Matenadaran can be regarded as a symbol of cultural interrelations.

ИВЕТ ТАДЖАРЯН

САРА ЛАПОРТ-ЭФТЕХАРЯН

НОВООТКРЫТАЯ ИЛЛЮСТРИРОВАННАЯ СТРАНИЦА КАК СИМВОЛ
КУЛЬТУРНЫХ ВЛИЯНИЙ

Ключевые слова: Пьер-Погос Лазарян, Анри Феликс Эмануэль Филиппото, Сара Лапорт-Эфтехарян, Пьер-Эдвард Фрер, Фаррох Хан.

В 2018 году Сара Лапорт-Эфтехарян подарила Матенадарану печатную

иллюстрированную страницу под названием “Прекрасная история народа Азии и Кавказа”, которая долгие годы принадлежала семье ее отца, Пьера-Погоса Лазаряна. Авторы попытались по возможности проследить историю этой работы.

Поскольку статья посвящена гравюре, авторы обратились к технике гравировки, что помогло проанализировать ныне не изученную иллюстрированную страницу.

Тематически и стилистически гравюра связана с временами Овнатаняна и Каджаров, но создана была в Европе. В статье описывается период создания картины, изучается окружение, техника письма, композиция, тема, национальность изображаемых лиц, положение каждой фигуры, их одежда и т. д.

Автор работы – Анри Феликс Эмануэль Филиппо из Франции, гравер – француз Пьер Эдуар Фрер. Гравюра была раскрашена акварелью в 1860 г. и издана во Франции. Она была специально написана для книги «Иностранцы в Париже», однако по неизвестной причине не вошла в нее.

Страница, хранящаяся в Матенадаране, может рассматриваться как свидетельство культурных влияний.



. 4



. 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինֆնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիլիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարող մի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանուշ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS

HISTORY

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic Gifts in the Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants' in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians' Attempts to Revive the Economy in Adana Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY

Gevorg Ter-Vardanyan

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat'ets'i as the First Samples in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion [of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants'i133

Hasmik Badalyan

Dzorovank' Monastery of Cilician Armenia and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний.....186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци.....196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана.....225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зограб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении.....248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви.....259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в.....285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам)299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе.....331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства.....342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
 в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
 календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
 Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/